Գ.Հ.Գասպարյան

## ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՃԵՑՐԱԾ ԵԹԵՐԱՅՈՒՂԱՏՈՒ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիա, բուսաբուծության ամբիոն*

Ներկայացվող աշխատանքի նպատակն է ՀՀ Արարատյան դաշտի հողակլիմայական պայմաններում ուսումնասիրել հիդրոպոնիկ եղանակով աճեցված եթերայուղատու դաղձի, կատվադաղձի և սուսամբարի տնկանյութի առանձնահատկությունները:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ նկատվում է որակական տարբերություն հողային և հիդրոպոնիկ պայմաններում ստացված տնկանյութերի միջև: Հողային մշակույթում աճեցված տնկանյութը ունի ավելի ցածր դիմադրողականություն և կպչողականություն, քան հիդրոպոնիկ տնկանյութը: Անհող պայմաններում աճեցված տնկանյութով հիմնված տնկարկները հետագայում լինում են ավելի լիարժեք, մոլախոտված դաշտերում ավելի լավ են դիմանում, իսկ հետագայում ավելի քիչ են վարակվում հիվանդություններով և տուժում վնասատուներից:

Տնկանյութի ծագումը էական ազդեցություն չի թողնում ուսումնասիրված մշակաբույսերում եթերայուղի պարունակության վրա: Սակայն հիդրոպոնիկ տնկանյութով հիմնված դաշտերում եթերայուղի ելը 1հա-ից ավելի բարձր է, քան հողային տնկանյութով տարբերակում: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում ավելի բարձր է արմատակալների և կոճղարմատների կպչողականությունն ու կենսունակությունը, որի շնորհիվ ապահովվում է նաև տնկարկների լիարժեքությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հողային պայմաններում եթերայուղատու դաղձի, կատվադաղձի և սուսամբարի տնկարկներ հիմնելիս նպատակահարմար է օգտագործել հիդրոպոնիկ պայմաններում աճեցված տնկանյութ:

G.H.Gasparyan

## RESEARCH ON AROMATIC PLANTS GROWN FROM SEEDLINGS PRODUCED UNDER HYDROPONIC CONDITIONS IN ARARAT VALLEY

**Summary**

It is reasonable to use seedlings produced by hydroponic technique when planting *Menta piperita*, *Nepeta cataria*, *Tanacetum vulgar* plants in soil.